Աստուծուն երբ լուսանայ. իւր ժամատեղն է մէյխանայ.

Մինչ ի կէս օր չորս հինգ օխա. զեխի ապա ի տուն դառնայ.

Հանդերձ անձին պատառոտուն. ընդ լուսաւոր առակի մեծ իմաստնոյն.

Քան զսանդի տոորն մերկագոյն. շրջի ընդ վայր զինչ սոված շուն.

Անպէտ մշակ չար ոստիկան. զայգի տիրուն աբար խոպան.

Անասնակոխ և անդարման. ինքն է դիւաց բնակարան.

Ունի և այլ բազում չարեր. որ իսկի մարդ զայն չէ արեր.

Հասցէ իւրեանքն չար օրեր. և զկայենին առցէ երեր։

Քան զայս աւելն այլ ինչ օգուտ. երբ նա անզեղջ է զերդ ջհուրդ.

Ոչ հայ ոչ Թուրք և ոչ մուլհուտ. զինքն ծածկէ քարէ կարկուտ.

Զոր ինչ իմովս աչօք տեսի. զբաներն ունայն չար իրիցի.

Զքիչն բազմաց ձեզ գրեցի. ես մարտիրոս վարդապետ ղրիմեցի։

Հոս կու տամ այն հատուկտոր տեղեկութիւններս զոր կրցած եմ հաւաքել Սոֆիայի Հայ գաղութին մասին։ 1549ին Սուլթան Սիւլէյմանի օրով Երեւանի Շորոթ գիւղէն բազմաթիւ Հայեր հոս կը գաղթեն։ 1650ին Ապրօ Զէլէպի կը շինէ եկեղեցի մը։ Իմ ձեռագիրներու հաւաքածոյիս մէջ ունիմ երկու հայերէն ձեռագիրներ գրուած Սոֆիա։ Մին Շարակնոց մ'է նօտրգիր որուն մէջ կայ սա յիշատակարանները։ «Յիշատակ է այս աստուածաշունչ տառս մահդասի աստուածատուրին հոգոյն և ծնողացն. սարգիսին. Նանի փաշին. և եղբարցն. և գւերն. և ամենայն արեան մերձաւորացն ի քաղաքն Սոֆիայ. ի դուռն սբ. աստուածածնայ. Թվին ռ. ղ. բ. (1643) օգոստոս ամսոյ ա.»։ Հոս չմոռնամ աւելցնել որ Սոֆիա ունի երկու եկեղեցի իրարու կից և գեղանափոր. անտարակոյս ձեռագրիս մէջ յիշուած Ս. Աստուածածնայ այս եկեղեցին հնագոյնն է և հաւանական որ Ապրօ Զէլէպի ոչ թէ շինած այլ 1650ին նորոգած ըլլայ 1643ին արդէն գոյութիւն ունեցող այդ եկեղեցին։ Ձեռագրիս յաջորդ յիշատակարաններն են. «Ես շուռութեցի կովէրքի որդի մխիթարըս գիրեցի խնդրեմք ծեզանէ եխբարք ովոք յանդիպի մէկ պերան և ծնողացս իմ ողորմի այսէք վարցքըն քրիստոս դուէ առնի թվն յայհոց ռ ճ հ զ ին (1727) յունիվարին ամսանքն դ. (4)ին ամէն»։ Թէև կան ուրիշ յիշատակարաններ ալ բայց ոչ կարեւոր։ Յիշատակարաններէն ոչ մին իր գրչէն է. միայն տեղ մը իր գրչէն ունի «Անտոն կրօնաւոր յիշեցէք»։ Կրնայ ըլլալ նաեւ որ ձեռագիրս հոս բերուած ըլլայ։ Իսկ յաջորդ ձեռագիրն է փոքրիկ տաղարան մը որուն մէջ իր գրչէն կայ. «Ես յովանէսի որդի եսաւրս գրեցի էս տետրս թիվին ռ ճ խ բ (1693) յուլիսի ամսոյն ժ.ին եղեւ սուփեալ»։ Հոս յիշուած Յովհաննէսը գուցէ Մարտիրոս Ղրիմեցւոյ յիշած Սոֆիայի Յունան երէցն ըլլայ. թէեւ այս մասին հաստատուն պատճառ մը չկայ բաց ի ժամանակի համապատասխանութենէն։ Մարտիրոս Ղրիմցի Սոֆիա գտնուած է 1673–1674ին միջեւ ատեն մը, և հոն կեցած շարաթ մը. հաւանաբար 1673ին. քանի որ այդ ատեն Սուլթան Մուրատ Լեհաստանի վրայ կատարած արշաւանքին պատճառաւ երկիրը՝ այսինքն Սոֆիա և իր շրջակայքը՝ կը գտնուէին ճամբուն վրայ և հեծեալ բանակը ողողած էր այս կողմերը ինչպէս որ Ղրիմեցի ալ կը վկայէ։

Սոֆիայի եկեղեցին գեղանափոր է և աւանդութեան համաձայն գեղանափոր են ըրած որպէս զի չերքէզ և ուրիշ այլազգիներ, որոնք եկեղեցի պղծելը սովորութիւն են ըրած եղեր, չպղծեն այս եկեղեցին իրենց ջորիները հոն մտցընելով։ 1883էն առաջ եկեղեցին կ'այրի. 1883ին Հայք նոր փայտաշէն եկեղեցի մը կը շինեն հոն։ 1883էն 1896 հայոց թիւը Հայաստանի մէջ տեղի ունեցած ջարդերուն և հալածանաց պատճառաւ Սոֆիայի մէջ կ'աճի և մինչև 250 տուն կը հաշուուի. այսինքն 1250 հոգի. մեծ մասամբ Ա. Պոլսեցի. Կ. Պոլսեցի. Վանեցի և Քեմախ-